

efes INSURANCE

«ԷՖԵՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026թ. երրորդ եռամսյակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ 4

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ..... 5

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 7

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ (ՈՒՂՂԱԿԻ ՄԵԹՈԴ)..... 8

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 9

1. Գործառնությունների բնույթը..... 9

2. Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն 9

3. Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ 10

4. Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն 12

5. Դրամական միջոցներ 38

6. Ավանդներ բանկերում և այլ անձանց տրամադրած փոխառություններ 38

7. Ներդրումներ արժեթղթերում 39

8. Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի գծով ակտիվներ և պարտավորություններ 40

9. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ 52

10. Այլ ակտիվներ 53

11. Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ..... 53

12. Այլ պարտավորություններ..... 54

13. Բաժնետիրական կապիտալ..... 54

14. Ապահովագրական հասույթ..... 55

15. Ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր..... 57

16. Վերաապահովագրողների կողմից փոխհատուցված գումարներ..... 61

17. Տոկոսային եկամուտ և ծախս..... 61

18. Ֆինանսական ակտիվների պարտքային կորուստների գծով ծախս 62

19. Պահվող վերաապահովագրության պայմանագրերից վերաապահովագրության գծով ֆինանսական եկամուտ 62

20. Թողարկված ապահովագրության պայմանագրերից ապահովագրության գծով ֆինանսական եկամուտ 63

21. Անձնակազմի գծով ծախսեր 64

22. Այլ ծախսեր 64

23. Շահութահարկի գծով փոխհատուցում 65

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ԷՖԵՍ ԱՓԲԸ, ՀՀ, ք.Երևան, Զարոբյան 11

Հազար ՀՀ դրամ	Ծնթ.	30 սեպտեմբերի 2026թ.	31 դեկտեմբերի 2025թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ	5	122,275	46,810
Ավանդներ բանկերում	6	1,563,269	1,675,882
Այլ անձանց տրամադրած փոխառություններ	6	403,986	538,975
Ներդրումներ արժեթղթերում	7	1,232,402	904,239
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	7	2,824,471	3,738,602
Ապահովագրական պայմանագրերի գծով ակտիվներ	8	-	-
Վերաապահովագրական պայմանագրերի գծով ակտիվներ	8	2,776,056	3,078,202
Հիմնական միջոցներ	9	921,679	946,844
Ոչ նյութական ակտիվներ	9	529,543	442,598
Հետաձգված հարկային ակտիվ	23	-	-
Այլ ակտիվներ	10	460,064	115,370
Ընդամենը ակտիվներ		**10,833,747**	**11,487,522**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	13	2,500,000	2,500,000
Գլխավոր պահուստ		9,701	-
Այլ պահուստ		215,467	257,539
Չբաշխված շահույթ		39,553	194,016
Ընդամենը սեփական կապիտալ		**2,764,720**	**2,951,555**
Պարտավորություններ			
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		2,285	60,167
Հետաձգված հարկային պարտավորություն	23	11,594	19,038
Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ	8	4,402,402	4,074,909
Վերաապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ	8	79,006	83,700
Հետգնման պայմանագրեր բանկերի հետ	11	2,704,819	3,476,711
Այլ պարտավորություններ	12	868,920	821,442
Ընդամենը պարտավորություններ		**8,069,026**	**8,535,967**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**10,833,747**	**11,487,522**

«ԷՖԵՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ հաշվետվությունները հաստատված են՝

Գլխավոր գործադիր տնօրեն՝
Արևշատ Մելիքսեթյան

MELIKSETYAN AREVSHAT 2008830063
Digitally signed by MELIKSETYAN AREVSHAT 2008830063
Date: 2026.10.15 17:16:08 +04'00'

Գլխավոր հաշվապահ՝
Հայկուհի Բաբայան

BABAYAN HAYKUHI 6012910762
Digitally signed by BABAYAN HAYKUHI 6012910762
Date: 2026.10.15 16:46:39 +04'00'

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԷՖԵՍ ԱՓԲԸ, ՀՀ, ք. Երևան, Զարոբյան 11 **30 սեպտեմբերի 2026թ.**

Հազար ՀՀ դրամ	Ծնթ.	Ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջան	Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվն ընկած ժամանա-կաշրջան (աճողական)	Նախորդ տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակ աշրջան	Նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (աճողական)
Ապահովագրական հասույթ	14	3,383,602	9,147,839	3,360,107	9,572,364
Ապահովագրական ծառայությունների ծախսեր	15	(1,878,794)	(5,323,754)	(1,973,182)	(6,372,301)
Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք նախքան պահվող վերաապահովագրության պայմանագրերը		**1,504,808**	**3,824,085**	**1,386,925**	**3,200,063**
Վերաապահովագրավճարների բաշխում	14	(2,129,002)	(5,849,675)	(2,087,903)	(5,966,445)
Վերաապահովագրողների կողմից փոխհատուցած գումարներ	16	1,158,616	3,346,836	1,336,143	4,611,976
Պահվող վերաապահովագրության պայմանագրերից զուտ ծախս		**(970,386)**	**(2,502,839)**	**(751,760)**	**(1,354,469)**
Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք		**534,423**	**1,321,247**	**635,165**	**1,845,594**
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	17	130,079	398,745	162,780	462,825
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսա կան արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վաճառքի գծով օգուտ (վնաս)	17	4,066	70,283	9,478	26,168
Տոկոսային ծախս	17	(56,376)	(177,370)	(77,427)	(199,812)
Ֆինանսական ակտիվների պարտքային կորուստների գծով ծախս	18	(1,454)	(216)	(2,617)	(2,681)
Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների արտարժույթային փոխարկումից զուտ օգուտ (վնաս)		(5,402)	(22,670)	(323)	(1,103)
Զուտ ներդրումային եկամուտ		**70,913**	**268,772**	**91,891**	**285,397**
Պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով ֆինանսական եկամուտ	19	4,223	21,454	1,172	9,947
Թողարկված ապահովագրության պայմանագրերի գծով ֆինանսական ծախս	20	(376)	(4,433)	(422)	(612)
Ապահովագրության գծով զուտ ֆինանսական արդյունք		**74,760**	**285,792**	**92,641**	**294,732**
Մաշվածություն	9	(75,972)	(210,560)	(65,290)	(187,701)
Անձնակազմի գծով ծախսեր	21	(381,673)	(1,153,799)	(450,618)	(1,180,840)
Այլ եկամուտ/ծախս	22	(104,412)	(283,361)	(87,288)	(228,323)
Շահույթ/վնաս մինչև հարկումը		**47,126**	**(40,681)**	**124,610**	**543,462**
Շահութահարկի գծով փոխհատուցում	23	(14,387)	(4,078)	(24,497)	(100,280)
Շահույթ/վնաս		**32,739**	**(44,759)**	**100,114**	**443,183**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք					
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվում շահույթում կամ վնասում		-	-	-	-

Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	-	-
Չվերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ	-	-	-	-
Զուտ օգուտ հոդվածներից, որոնք հետագայում չեն վերադասակարգվելու շահույթում կամ վնասում	-	-	-	-
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս				
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ/(վնաս)	(55,150)	(50,105)	66,157	66,221
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում	(293)	(1,207)	46	253
Վերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ	9,980	9,236	(11,916)	(11,965)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո	**(45,463)**	**(42,076)**	**54,287**	**54,509**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք	**(12,724)**	**(86,835)**	**154,401**	**497,692**

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԷՖԵՍ ԱՓԲԸ, ՀՀ, ք. Երևան, Զարոբյան 11 **30 սեպտեմբերի 2026թ.**

Հազար ՀՀ դրամ	Բաժնետի-րական կապիտալ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրումներ ի գծով վերագնահա տման պահուստ	Հիմնական միջոցների գծով վերագնա-հատման պահուստ	Չբաշխված շահույթ/ (Կուտակված վնաս)	Ընդամենը
Հաշվեկշիռը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,500,000**	**-**	**57,260**	**-**	**(215,133)**	**2,342,127**
Շահաբաժիններ	-		-	-	-	**-**
Հատկացում պահուստին	-	-	-	-	-	**-**
Սեփականատերերի հետ գործարքներ	-	**-**	-	-	**-**	**-**
Տարվա շահույթ/(վնաս)	-	-	-	-	-	**-**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-		-		**-**
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ/(վնաս)	-	-	66,224	-	-	**66,224**
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում	-	-	253	-	-	**253**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	(11,965)	-	-	**(11,965)**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**-**	**-**	**54,512**	**-**	**443,183**	**497,695**
Հաշվեկշիռը 2025թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ	**2,500,000**	**-**	**111,772**	**-**	**228,044**	**2,839,816**
Հաշվեկշիռը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**2,500,000**	**-**	**257,539**	**-**	**194,016**	**2,951,555**
Շահաբաժիններ	-		-	-	(100,000)	**(100,000)**
Հատկացում պահուստին	-	9,701		-	(9,701)	**-**
Սեփականատերերի հետ գործարքներ	-	-	-	-	-	**-**
Տարվա շահույթ/(վնաս)	-	-	-	-	(44,759)	**(44,759)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք						
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-		-		**-**
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ/(վնաս)	-	-	(50,105)	-	-	**(50,105)**
Փոփոխություններ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում	-	-	(1,207)	-	-	**(1,207)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքին վերաբերող բաղկացուցիչ մասի շահութահարկ	-	-	9,236	-	-	**9,236**
Ընդամենը ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյուն	**-**	**9,701**	**(42,073)**	**-**	**(154,457)**	**(186,835)**
Հաշվեկշիռը 2026թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ	**2,500,000**	**9,701**	**215,466**	**-**	**39,553**	**2,764,720**

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ (ՈՒՂՂԱԿԻ ՄԵԹՈԴ)

ԷՖԵՍ ԱՓԲԸ, ՀՀ, ք.Երևան, Զարոբյան 11 **30 սեպտեմբերի 2026թ.**

Հազար ՀՀ դրամ	**Ընթացիկ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը**	**Նախորդ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը**
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Ստացված ապահովագրավճարներ	8,856,905	9,614,925
Փոխանցված վերաապահովագրավճարներ	(1,861,021)	(3,311,354)
Վճարված հատուցումներ	(4,317,703)	(5,147,183)
Վճարված հատուցումներում վերաապահովագրողի մասը	60,401	75,083
Ստացված գումարներ սուբրոգացիայի գծով	5,059	23,308
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(1,333,083)	(1,249,085)
Վճարումներ մատակարարներին	(248,100)	(215,310)
Վճարումներ միջնորդներին	(348,118)	(209,170)
Վճարված հարկեր, բացառությամբ շահութահարկի	(370,328)	(323,916)
Այլ ելքեր	(49,872)	(62,041)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	**394,140**	**(804,743)**
Վճարված շահութահարկ	(84,234)	-
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**309,906**	**(804,743)**
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի (առք)/վաճառք	873,760	189,587
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք/(առք)	(324,228)	(266,049)
Ավանդների մարում/(ներդրում)	203,227	179,480
Փոխառությունների մարում/(տրամադրում)	60,000	(446,100)
Ներդրումային գույքից ստացված վարձավճար	-	-
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**812,759**	**(343,082)**
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Կանոնադիր կապիտալի համալրում	-	-
Շահաբաժիններ	-	-
Վարկերի ստացում/(մարում)	(918,016)	1,313,150
Վարձավճարների վճարում	(86,722)	(94,925)
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**(1,004,738)**	**1,218,225**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**117,927**	**70,400**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	46,810	11,430
Արտարժույթով վերահաշվարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(42,462)	(20,525)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթ. 5)	**122,275**	**61,305**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործառնությունների բնույթը

«ԷՖԵՍ» Ապահովագրական ՓԲԸ-ն Ընկերությունը զբաղվում է ընդհանուր ապահովագրական գործունեությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում: Ընկերության կողմից կնքվող ապահովագրական պայմանագրերի հիմնական տեսակներն են՝ դժբախտ պատահարներից, առողջության, ցամաքային տրանսպորտի, փոխադրվող գույքի (բեռների), հրդեհից և բնական աղետներից, ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության, ֆինանսական վնասների, ընդհանուր պատասխանատվության, երաշխիքի, գյուղատնտեսության, արտասահման մեկնողներին աջակցության ապահովագրությունը: Բացի այդ, Ընկերությունն իրականացնում է օդանավերի, ինչպես նաև դրանց օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն:

2. Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

«ԷՖԵՍ» Ապահովագրական ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 2023թ. հուլիսի 25-ին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Ընկերությունը գրանցվել է 25.07.2023թ. ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N 0012 և 0005 արտոնագրային համարներով:

Ընկերության գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կենտրոն, Յա. Զարոբյան փողոց, տարածք 11:

2026թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Ընկերության աշխատակիցների ընդհանուր թվաքանակը 200-ն էր:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Ընկերության շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

2.1. Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը շարունակում է բախվել մի շարք ներքին և արտաքին մարտահրավերների՝ պայմանավորված աշխարհաքաղաքական լարվածությամբ, տարածաշրջանային անվտանգության խնդիրներով և գլոբալ տնտեսության փոփոխվող ռիսկերով: Այնուամենայնիվ, հայկական բիզնեսը աստիճանաբար հարմարվում է նոր պայմաններին՝ դիվերսիֆիկացնելով մատակարարման շղթաները, ընդլայնելով արտահանման շուկաները և կիրառելով առավել ճկուն գործառնական մոդելներ: Ներդրումային միջավայրի բարելավմանն,

ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանն ու մասնավոր հատվածի զարգացմանն ուղղված պետական բարեփոխումները ստեղծում են երկարաժամկետ տնտեսական կայունության հիմքեր:

Աճող ոլորտները մեծապես շահում են ներմուծման ընդլայնումից, սպառողական ակտիվությունից, ինչպես նաև զբոսաշրջության վերականգնումից, որն ավելացնում է ծառայությունների պահանջարկը: Շինարարության աճը պայմանավորված է ինչպես մասնավոր ներդրումներով, այնպես էլ բնակարանաշինության շարունակական բարձր պահանջարկով, ինչը դարձնում է այն տնտեսության ամենաակտիվ ճյուղերից մեկը: Ընդհանուր առմամբ, տնտեսության շարժիչ ուժը շարունակում են մնալ սպառման վրա հիմնված ոլորտները:

Չնայած արտաքին ռիսկերի աճին և գլոբալ ֆինանսական անորոշություններին՝ ֆինանսական հաստատությունները շարունակում են առանցքային դեր խաղալ տնտեսական ակտիվության աջակցման գործում՝ իրականացնելով վարկավորման, վճարահաշվարկային ծառայությունների և ռիսկերի կառավարման արդյունավետ գործառույթներ:

2025թ. պետական բյուջեի համաձայն՝ Հայաստանի տնտեսական աճը նախատեսված էր 5.1%, իսկ 2026թ.՝ 5.4%:

Տվյալ ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության վրա՝ Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ընկերության ղեկավարությունը շարունակաբար վերլուծում է տնտեսական իրավիճակը ներկա միջավայրում: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

2.2. Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ձևը

Ընկերությունը ներկայացնում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ըստ իրացվելիության՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվության համապատասխան հոդվածային տողի ակտիվների/պարտավորությունների մեծ մասը ստանալու/մարելու Ընկերության մտադրության և ակնկալվող կարողության վրա:

3. Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1. 2026թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՖՀՄՄ մեկնաբանությունների կոմիտեի կողմից:

ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ» ստանդարտի փոփոխությունը՝ կապված «Փոխանակելիության բացակայության» հետ առաջին անգամ կիրառվել է 2025թ., որը սահմանում է պահանջներ՝ գնահատելու, թե երբ է արժույթը փոխարկելի այլ արժույթի նկատմամբ, և երբ՝ ոչ: Ստանդարտի այս փոփոխության ընդունումը ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.2. Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր

ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

• ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»

2024թ. ապրիլին ՀՀՄՄԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում» ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտը: Չնայած ՖՀՄՍ 18-ը ներառում է ՀՀՄՍ 1-ի բազմաթիվ պահանջներ, այն ներկայացնում է նոր պահանջներ՝ ֆինանսական հաշվետվությունների կառուցվածքը բարելավելու և ներդրողներին ավելի մանրամասն ու օգտակար տեղեկատվություն տրամադրելու նպատակով, ներառյալ՝

- շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում երկու նոր ենթագումարի սահմանում՝ գործառնական շահույթ և շահույթ կամ վնաս մինչև ֆինանսավորումը և հարկերը

- շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտների և ծախսերի դասակարգում հետևյալ հինգ կատեգորիաներից մեկում՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, հարկեր և ընդհատված գործառնություններ

- ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափանիշների բացահայտման նոր պահանջ

- ֆինանսական հաշվետվություններում և կից ծանոթագրություններում ներկայացվող տեղեկատվության միավորման և տարանջատման սկզբունքների բարելավում

Նախկինում ՀՀՄՍ 1-ում ներառված որոշ բացահայտման պահանջներ տեղափոխվել են ՀՀՄՍ 8՝ առանց էական փոփոխությունների: Սա հատկապես վերաբերում է հաշվապահական հաշվառման քաղաքականության և գնահատման անորոշության աղբյուրների բացահայտումներին: Այս փոփոխությունների արդյունքում ՀՀՄՍ 8-ը կվերանվանվի «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ»:

Ի հավելումն, ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտում կատարվել են սահմանափակ փոփոխություններ, որոնք ներառում են անուղղակի մեթոդով պատրաստված հաշվետվության գործառնական գործունեությունից դրամական հոսքերի որոշման մեկնարկային կետի փոփոխությունը «շահույթ կամ վնասից» «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից և տոկոսներից դրամական հոսքերի դասակարգման ընտրանքի վերացումը: Բացի այդ, կան հետևողական փոփոխություններ մի շարք այլ ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներում:

ՖՀՄՍ 18-ը ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար՝ ավելի վաղ կիրառման հնարավորությամբ: ՖՀՄՍ 18-ը կկիրառվի հետընթաց՝ կիրառելով հատուկ անցումային դրույթներ:

Ընկերությունը ներկայում գնահատում է ՀՀՄՍ 18-ի ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

Ղեկավարության գնահատմամբ չի ակնկալվում, որ այլ նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները, որոնք չեն կիրառվել ընթացիկ տարում, էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

• «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)

• «Բնությունից կախված էլեկտրաէներգիային հղումով պայմանագրեր» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ) (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)

• ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան բարեփոխումներ - Հատոր 11 (ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)

• ՖՀՄՍ 19 «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. բացահայտումներ» (ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար)

• ՖՀՄՍ 19-ի՝ «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. բացահայտումներ», փոփոխություններ (ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար):

4. Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1. Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով: Ֆինանսական գործիքները ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով, ինչպես նաև իրական արժեքով:

4.2. Կլիմային առնչվող հարցեր

Ընկերությունը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, և երաշտը:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները, որոնք կապված են չեզոքացման կամ հարմարվելու ձախողման հետ, և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

4.3. Արտարժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են Ընկերության գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով:

Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի խմբերը, որոնք առաջացնում են դրամական հոսքեր արտարժույթով, հաշվառվում են որպես դրամային հոդվածներ:

Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքը: Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկումից տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ արտարժույթի փոխարկումից զուտ եկամուտ (ծախս) տողում:

Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ տարեվերջյան փոխարժեքները.

	30 սեպտեմբերի 2026թ.	31 դեկտեմբերի 2025թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	362.83	381.36
ՀՀ դրամ/1 Եվրո	412.14	449.01

4.4. Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրեր

4.4.1. Դասակարգում

Ապահովագրության պայմանագիր է համարվում այն պայմանագիրը, համաձայն որի կողմերից մեկը (ապահովագրողը) պայմանագրի մյուս կողմից (ապահովադրից) իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադրին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադրի վրա: Ապահովագրական ռիսկը նշանակալի է այն և միայն այն դեպքում, եթե ապահովագրական պատահարը ցանկացած սցենարի դեպքում կարող էր ապահովագրողի կողմից նշանակալի լրացուցիչ հատուցումների վճարման պատճառ դառնալ, բացառությամբ այն սցենարների, որոնք չունեն առևտրային բովանդակություն: Ապահովագրության պայմանագրերը կարող են նաև փոխանցել ֆինանսական ռիսկ: Ֆինանսական ռիսկը սահմանված տոկոսադրույքի, ֆինանսական գործիքի գնի, ապրանքի գնի, արտարժույթի փոխարժեքի, գնի կամ դրույքների ինդեքսի, վարկանիշի կամ վարկային ինդեքսի կամ այլ փոփոխականի հնարավոր ապագա փոփոխության ռիսկն է՝պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում այդ փոփոխականը հատուկ չէ պայմանագրի կողմերից մեկին:

Պայմանագիրը, որը բավարարում է ապահովագրության պայմանագրի սահմանմանը, մնում է որպես ապահովագրության պայմանագիր մինչ իր ժամկետի վերջը, նույնիսկ եթե ապահովագրության ռիսկը զգալիորեն կրճատվում է այդ ժամանակաշրջանի համար, մինչև բոլոր իրավունքները և պարտականությունները մարվում են, կամ դրանց գործողության ժամկետը լրանում է:

4.4.2. Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերից բաղադրիչների առանձնացումը

Ընկերությունը գնահատում է իր ոչ կյանքի ապահովագրության և վերաապահովագրության գործիքները՝ որոշելու, թե արդյոք դրանք պարունակում են առանձնացվելի բաղադրիչներ, որոնք պետք է հաշվառվեն ոչ թե ՖՀՄՍ 17-ի,այլ մեկ այլ ՖՀՄՍ-ի համաձայն: Առանձնացվելի բաղադրիչներն առանձնացնելուց հետո Ընկերությունը կիրառում է ՖՀՄՍ 17-ը ապահովագրության պայմանագրի մնացած բոլոր (հիմնական) բաղադրիչների նկատմամբ: Ընկերության գործիքները ներկայում չեն պարունակում որևէ բաղադրիչ, որը պահանջում է առանձնացում:

4.4.3. Ընդհանրացման մակարդակ

Ընկերության ապահովագրության և վերաապահովագրության գործիքների ընդհանրացման մակարդակը սահմանվում է առաջին հերթին բիզնեսը պորտֆելների բաժանելով: Պորտֆելները բաղկացած են համանման ռիսկերի ենթակա և միասին կառավարվող պայմանագրերից: Ենթադրվում է, որ նույն ապրանքային ուղղությունում ներառված պայմանագրերը կունենան համանման ռիսկեր և, հետևաբար, ակնկալվում է, որ կլինեն միևնույն պորտֆելում, եթե դրանք կառավարվում են միասին: Պորտֆելները հետագայում բաժանվում են ըստ թողարկման տարվա և շահութաբերության՝ ճանաչման և չափման նպատակով: Ընդհանրացման մակարդակի համար նախատեսված ոչ մի խումբ չի կարող պարունակել մեկ տարուց ավելի տարբերությամբ թողարկված պայմանագրեր: Պայմանագրերի խմբերի շահութաբերությունը գնահատվում է ակտուարական գնահատման մոդելներով, որոնք հաշվի են առնում առկա և նոր բիզնեսը: Այսպիսով, թողարկման յուրաքանչյուր տարվա ընթացքում պայմանագրերի պորտֆելները բաժանվում են հետևյալ երեք խմբերի՝

- պայմանագրերի խումբ, որոնք սկզբնական ճանաչման պահին դասակարգվել են որպես անբարենպաստ, եթե այդպիսիք առկա են,
- պայմանագրերի խումբ, որոնց սկզբնական ճանաչման պահին նշանակալի հավանականություն չկա, որ դրանք հետագայում կդառնան անբարենպաստ, եթե այդպիսիք առկա են,

պորտֆելի մնացած պայմանագրերի խումբ, եթե այդպիսիք առկա են:

Ընկերությունը նույնականացրել է ապահովագրության պայմանագրերի հետևյալ պորտֆելները.

- Գույքի ապահովագրության պայմանագրեր,
- Բեռի (փոխադրվող գույքի) ապահովագրության պայմանագրեր,
- Օդանավերի և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության պայմանագրեր,
- Ցամաքային ավտոտրանսպորտի և դրանց օգտագործումից բխող պատասխանատվության կամավոր ապահովագրության պայմանագրեր,
- Առողջության կամավոր ապահովագրության պայմանագրեր,
- Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմանագրեր,
- Ընդհանուր պատասխանատվության ապահովագրության պայմանագրեր,
- Ճամփորդության աջակցության ապահովագրության պայմանագրեր:

Սկզբնական ճանաչման պահին ապահովագրության պայմանագիրն անբարենպաստ է, եթե պայմանագրին վերագրված՝ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի, ձեռքբերման գծով նախկինում ճանաչված դրամական հոսքերի և պայմանագրից առաջացող ցանկացած այլ դրամական

հոսքերի՝ սկզբնական ճանաչման պահին ընդհանուր գումարը հանգեցնում է զուտ արտահոսքի: Ընկերությունը խմբավորում է նմանատիպ պայմանագրերը՝ դրանք առանձնացնելով անբարենպաստ չհանդիսացող պայմանագրերից: Ընկերությունը նույնականացնում է անբարենպաստ պայմանագրերի խումբը՝ գնահատելով պայմանագրերի փաթեթը, այլ ոչ թե առանձին պայմանագրերը:

Պայմանագրերի համար, որոնք անբարենպաստ պայմանագրեր չեն, սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը գնահատում է, որ հետագայում անբարենպաստ դառնալու էական հնարավորություն չկա՝ գնահատելով կիրառելի փաստերի և հանգամանքների փոփոխությունների հավանականությունը: Ընկերությունը դիտարկում է փաստեր և հանգամանքներ՝ պարզելու համար, թե արդյոք պայմանագրերի խումբը անբարենպաստ է՝ հիմնվելով հետևյալի վրա.

- գնային տեղեկատվություն (ներառյալ զեղչերը),
- իր կողմից ճանաչված նմանատիպ պայմանագրեր,
- արտաքին միջավայրի գործոններ, օրինակ՝ շուկայի փորձի կամ կանոնակարգերի փոփոխություն:

Ընկերությունը բաժանում է պահվող վերաապահովագրության պայմանագրերի պորտֆելները վերը նշված նույն սկզբունքների կիրառմամբ, բացառությամբ անբարենպաստ վերաապահովագրության պայմանագրերի, որոնց համար սկզբնական ճանաչման ժամանակ առկա է զուտ օգուտ:

Պահվող վերաապահովագրության պայմանագրերի որոշ խմբերի դեպքում խումբը կարող է բաղկացած լինել մեկ պայմանագրից:

4.4.4.Ճանաչում

Ընկերությունն իր կողմից թողարկվող ապահովագրության պայմանագրերի խումբը պետք է ճանաչի հետևյալներից ամենավաղ ամսաթվին.

- պայմանագրերի խմբի ծածկույթի ժամանակահատվածի սկիզբ,
- ամսաթիվ, երբ խմբի ապահովադրից առաջին վճարումը դառնում է ստացման ենթակա,
- անբարենպաստ պայմանագրերի խմբի համար, երբ խումբը դառնում է անբարենպաստ:
- Ընկերությունը պահվող վերաապահովագրության պայմանագրերի խումբը պետք է ճանաչի հետևյալներից ավելի վաղ ամսաթվին.

պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի ծածկույթի ժամանակահատվածի սկիզբ: Այնուամենայնիվ, Ընկերությունը հետաձգում է պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի ճանաչումը, եթե պահվող վերաապահովագրության պայմանագրերը ապահովում են համամասնական ծածկույթ՝ պահվող վերաապահովագրության պայմանագրերի ծածկույթի ժամանակահատվածի սկզբի դրությամբ կամ հիմքում ընկած ցանկացած պայմանագրի սկզբնական ճանաչման պահին, կախված, թե որն է ավելի ուշ տեղի ունենում, և

ամսաթիվ, երբ Ընկերությունը ճանաչում է հիմքում ընկած ապահովագրության պայմանագրերի անբարենպաստ խումբ, եթե Ընկերությունը կնքել է համապատասխան վերաապահովագրության պայմանագիր, որը պահվում է այդ ամսաթվին կամ դրանից առաջ կնքված վերաապահովագրության պայմանագրերի խմբում:

Ընկերությունը նոր պայմանագրեր է ավելացնում խմբին այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այդ պայմանագիրը համապատասխանում է վերը նշված չափանիշներից մեկին:

4.4.5. Պայմանագրի շրջանակներ

Ընկերությունը ապահովագրության պայմանագրերի խմբի չափման մեջ ներառում է բոլոր այն ապագա դրամական հոսքերը, որոնք գտնվում են խմբի յուրաքանչյուր պայմանագրի շրջանակներում: Դրամական հոսքերը ապահովագրության պայմանագրի շրջանակներում են գտնվում, եթե դրանք առաջանում են իրական իրավունքներից և պարտականություններից, որոնք գոյություն ունեն այն հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, որում Ընկերությունը կարող է պարտադրել ապահովադրին

վճարելու ապահովագրական վճարներ կամ որում Ընկերությունն ապահովադրին ծառայություններ մատուցելու իրական պարտականություն ունի: Ծառայություններ մատուցելու իրական պարտականությունը դադարում է, երբ

Ընկերությունը գործնականում հնարավորություն ունի վերանայելու կոնկրետ ապահովադրի ռիսկերը և արդյունքում՝ կարող է սահմանել գին կամ օգուտների մակարդակ, որոնք ամբողջությամբ արտացոլում են այդ ռիսկերը, կամ

Ընկերությունը գործնականում հնարավորություն ունի վերանայելու տվյալ պայմանագիրը ներառող ապահովագրության պայմանագրերի պորտֆելի ռիսկերը և արդյունքում՝ կարող է սահմանել գին կամ օգուտների մակարդակ, որոնք ամբողջությամբ արտացոլում են այդ պորտֆելի ռիսկը և մինչև ռիսկերի վերանայման ամսաթիվը առկա ծածկույթի համար ապահովագրական վճարի գին որոշելիս հաշվի չեն առնվում վերանայման ամսաթվին հաջորդող ժամանակաշրջաններին վերաբերող ռիսկերը:

Պարտավորությունը կամ ակտիվը, որը վերաբերում է ակնկալվող ապահովագրական վճարների կամ ակնկալվող պահանջների հետ կապված որևէ գումարի, որը ապահովագրության պայմանագրի շրջանակներից դուրս է, չպետք է ճանաչվի: Նմանատիպ գումարները վերաբերում են ապահովագրության ապագա պայմանագրերին:

4.4.6. Չափում

Ապահովագրության պայմանագրեր – սկզբնական չափում

Ընկերությունը կիրառում է ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը (PAA) բոլոր թողարկված ապահովագրության պայմանագրերի և պահվող վերաապահովագրության պայմանագրերի նկատմամբ, քանի որ.

- խմբի յուրաքանչյուր պայմանագրի ծածկույթի ժամանակահատվածը, ներառյալ պայմանագրի շրջանակներում բոլոր ապահովագրական վճարներից առաջացած ծածկույթը հիմնականում մեկ տարի է կամ ավելի քիչ,
- մեկ տարուց ավելի երկար պայմանագրերի դեպքում Ընկերությունը մոդելավորել է ապագա հնարավոր սցենարներ և ողջամտորեն ակնկալում է, որ ապահովագրական վճարի բաշխման մոտեցման համաձայն այդ պայմանագրերը պարունակող խմբի համար մնացորդային ծածկույթի գծով պարտավորության չափումը էականորեն չի տարբերվի ընդհանուր մոդելի կիրառմամբ կատարվող չափումից: Էականությունը գնահատելիս Ընկերությունը հաշվի է առել նաև այնպիսի որակական գործոններ, ինչպիսիք են ռիսկի բնույթը և իր գործունեության ոլորտների տեսակները:

Դժբախտ պատահարներից ապահովագրության, գույքի ապահովագրության և ընդհանուր պատասխանատվության ապահովագրության պորտֆելները ներառում են մեկ տարուց ավել ծածկույթի ժամկետով պայմանագրեր: Այնուամենայնիվ, մնացորդային ծածկույթի համար պարտավորության չափման հարցում ապահովագրական վճարի բաշխման մոտեցման և ընդհանուր մոդելի միջև էական տարբերություն չկա, ուստի դրանք համապատասխանում են ապահովագրական վճարի բաշխման մոտեցման չափանիշներին: Ընկերության ապահովագրության մնացած պորտֆելների ծածկույթի ժամկետը կազմում է մեկ տարի կամ ավելի քիչ, հետևաբար, կիրառվում է ապահովագրական վճարի բաշխման մոտեցմամբ:

Ընկերությունը չի կիրառում ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը, երբ պայմանագրերի խմբի գործողության ժամկետի սկզբի դրությամբ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում ակնկալում է նշանակալի փոփոխականություն, որն ազդելու է ժամանակաշրջանի ընթացքում մնացորդային ծածկույթի գծով պարտավորության չափման վրա՝ նախքան պահանջի տեղի ունենալը:

Պայմանագրերի խմբի համար, որոնք սկզբնական ճանաչման ժամանակ անբարենպաստ չեն, Ընկերությունը մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունը չափում է հետևյալ կերպ՝

- ապահովագրական վճարներ՝ ստացված սկզբնական ճանաչման պահին, եթե այդպիսիք առկա են,
- հանած այդ պահի դրությամբ ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը, բացառությամբ, եթե կազմակերպությունը նախընտրել է այդ վճարումները ճանաչել որպես ծախս,
- գումարած կամ հանած ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գծով ճանաչված ակտիվի կամ պարտավորության՝ այդ ամսաթվի դրությամբ ապաճանաչումից առաջացող ցանկացած գումար,
- ցանկացած այլ ակտիվ կամ պարտավորություն, որը նախկինում ճանաչվել է պայմանագրերի խմբի հետ կապված դրամական հոսքերի առնչությամբ, որոնք Ընկերությունը վճարում կամ ստանում է մինչև ապահովագրության պայմանագրերի խմբի ճանաչումը:

Այն դեպքերում, երբ փաստերն ու հանգամանքները ցույց են տալիս, որ պայմանագրերը անբարենպաստ են սկզբնական ճանաչման պահին, Ընկերությունը լրացուցիչ վերլուծություն է կատարում՝ որոշելու, թե արդյոք պայմանագրից ակնկալվում է զուտ արտահոսք: Նմանատիպ անբարենպաստ պայմանագրերն խմբավորվում են՝ առանձնացվելով անբարենպաստ չհանդիսացող պայմանագրերից, և Ընկերությունը զուտ արտահոսքերի հետ կապված՝ շահույթում կամ վնասում ճանաչում է կորուստ, որի արդյունքում խմբի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը հավասար է պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերին: Ընկերությունը ձևավորում է անբարենպաստ խմբի մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչ՝ ճանաչված կորուստներն արտացոլելու համար:

Պահվող վերաապահովագրության պայմանագրեր – սկզբնական չափում

Ընկերությունը պահվող վերաապահովագրության պայմանագրերի չափումն իրականացնում է նույն սկզբունքների համաձայն, ինչ թողարկված ապահովագրական պայմանագրերի չափումը: Սակայն դրանք հարմարեցվում են պահվող վերաապահովագրության պայմանագրերին բնորոշ հատկանիշներն արտացոլելու համար, որոնք տարբերվում են թողարկված ապահովագրության պայմանագրերից, օրինակ ծախսերի գեներացում կամ հասույթի փոխարեն ծախսերի նվազեցում:

Ընկերության պահվող վերաապահովագրության օբլիգատոր պայմանագրերը ներառում են մեկ տարուց ավել ծածկույթի ժամկետով վերաապահովագրական պորտֆելներ: Ապահովագրական վճարի բաշխման մոտեցման և ընդհանուր մոդելով չափված մնացորդային ծածկույթի պարտավորության մեծությունների միջև էական տարբերություն չի առաջանում:

Ընկերության կողմից պահվող վերաապահովագրության մնացած պորտֆելների ծածկույթի ժամկետը կազմում է մեկ տարի կամ ավելի քիչ, հետևաբար, կիրառվում է ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը:

Երբ Ընկերությունը հիմքում ընկած ապահովագրական պայմանագրերի անբարենպաստ խմբի սկզբնական ճանաչման ժամանակ ճանաչում է վնաս կամ երբ խմբին ավելացվում են լրացուցիչ անբարենպաստ ապահովագրական պայմանագրեր, Ընկերությունը պահվող վերաապահովագրության պայմանագրերի անբարենպաստ խմբի մնացորդային ծածկույթի գծով ակտիվի կազմում սահմանում է վնասի փոխհատուցման բաղադրիչ՝ արտացոլելով վնասի փոխհատուցումը:

Ընկերությունը հաշվարկում է վնասի փոխհատուցման բաղադրիչը՝ բազմապատկելով հիմքում ընկած ապահովագրության պայմանագրերի գծով ճանաչված վնասը և հիմքում ընկած ապահովագրության պայմանագրերի գծով պահանջների տոկոսը, որոնք Ընկերությունն ակնկալում է փոխհատուցել պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի հաշվին: Ընկերությունը կիրառում է պարբերական և խելամիտ մեթոդ որոշելու ապահովագրության պայմանագրերի խմբի գծով վնասների այն մասը, որը վերաբերում է պահվող վերաապահովագրության պայմանագրերով ծածկվող ապահովագրության պայմանագրերին, որտեղ հիմքում ընկած խմբի որոշ պայմանագրեր չեն ծածկվում պահվող վերաապահովագրության պայմանագրերով:

Վնասի փոխհատուցման բաղադրիչը ճշգրտում է մնացորդային ծածկույթի գծով ակտիվի հաշվեկշռային արժեքը:

Ապահովագրության պայմանագրեր – հետագա չափում

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում չափում է մնացորդային ծածկույթի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը որպես ժամանակաշրջանի սկզբի դրությամբ մնացորդային ծածկույթի գծով պարտավորություն.

- գումարած ժամանակաշրջանի ընթացքում ստացված ապահովագրական վճարները,
- հանած ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը՝ բացառությամբ, եթե Ընկերությունը ընտրում է ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը ճանաչել որպես ծախս դրանց տեղի ունենալու պահին,
- գումարած ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիային առնչվող ցանկացած գումար, որը հաշվետու ժամանակաշրջանում ճանաչվել է որպես ծախս,
- գումարած ֆինանսավորման բաղադրիչի գծով ցանկացած ճշգրտում, որտեղ կիրառելի է,
- հանած այդ ժամանակաշրջանում տրամադրված ծածկույթի գծով որպես ապահովագրական հասույթ ճանաչված գումար,
- հանած ցանկացած ներդրումային բաղադրիչ, որը վճարվել կամ փոխանցվել է կրած պահանջների գծով պարտավորությանը:

Ընկերությունը գնահատում է կրած պահանջների գծով պարտավորությունը որպես պայմանագրի կատարման գծով դրամական հոսքեր, որոնք վերաբերվում են կրած պահանջների գծով պարտավորությանը: Պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերը անաչառ կերպով հաշվի են առնում ամբողջ հիմնավոր և ողջամիտ տեղեկատվությունը տվյալ ապագա դրամական հոսքերի մեծության, ժամկետների և անորոշությունների վերաբերյալ, որը հասանելի է առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի, դրանք արտացոլում են ընթացիկ գնահատումները Ընկերության տեսանկյունից և ներառում են հստակ ճշգրտում ոչ ֆինանսական ռիսկի գծով (ռիսկերի ճշգրտում): Ընկերությունը չի ճշգրտում ապագա դրամական հոսքերը փողի ժամանակային արժեքի և ֆինանսական ռիսկի ազդեցության համար՝ կրած պահանջների գծով պարտավորությունները գնահատելիս, որոնք պետք է վճարվեն դրանց առաջացման պահից մեկ տարվա ընթացքում:

Եթե ծածկույթի ժամանակահատվածում փաստերն ու հանգամանքները ցույց են տալիս, որ ապահովագրության պայմանագրերի խումբն անբարենպաստ է, Ընկերությունը անբարենպաստ պայմանագրերի խմբի գծով զուտ արտահոսքերի հետ կապված՝ շահույթում կամ վնասում ճանաչում է կորուստ, որի արդյունքում խմբի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը հավասար է պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերին: Ընկերությունն այսպիսի անբարենպաստ խմբի համար ձևավորում է անբարենպաստ խմբի մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչ՝ ճանաչված կորուստներն արտացոլելու համար:

Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը բաշխվում են գծային հիմունքով՝ որպես ապահովագրական վճարների մի մաս շահույթի կամ վնասի կազմում:

Պահվող վերաապահովագրության պայմանագրեր - հետագա չափում

Պահվող վերաապահովագրության պայմանագրերի հետագա չափումն իրականացվում է նույն սկզբունքների համաձայն, ինչ թողարկված ապահովագրական պայմանագրերի չափումը և հարմարեցում է՝ արտացոլելու պահվող վերաապահովագրության պայմանագրերին բնորոշ հատկանիշները:

Եթե Ընկերությունը սահմանել է վնասի փոխհատուցման բաղադրիչ, Ընկերությունը հետագայում նվազեցնում է վնասի փոխհատուցման բաղադրիչը մինչև զրոյի՝ հիմքում ընկած ապահովագրական պայմանագրերի անբարենպաստ խմբի նվազումներին համապատասխան, որպեսզի արտացոլի, որ

վնասի փոխհատուցման բաղադրիչը չպետք է գերազանցի հիմքում ընկած ապահովագրական պայմանագրերի անբարենպաստ խմբի վնասի բաղադրիչի հաշվեկշռային արժեքի այն մասը, որը Ընկերությունն ակնկալում է փոխհատուցել պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի հաշվին:

4.4.7. Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր

Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը առաջանում են ապահովագրության պայմանագրերի խմբի վաճառքի, տեղաբաշխման և կնքման հետ կապված ծախսերից, որոնք ուղղակիորեն վերագրելի են այն ապահովագրության պայմանագրերի պորտֆելին, որին այդ խումբը պատկանում է:

Ընկերությունը օգտագործում է պարբերական և խելամիտ մեթոդ՝ բաշխելու

- ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ապահովագրության պայմանագրերի խմբին,
- ապահովագրական պայմանագրերի պորտֆելին ուղղակիորեն վերագրելի պահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը, որոնք ուղղակիորեն վերագրելի չեն պորտֆելի պայմանագրերի խմբին:

Այն դեպքում, երբ ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը վճարվել կամ առաջացել են նախքան ապահովագրական պայմանագրերի համապատասխան խմբի՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվելը, յուրաքանչյուր համապատասխան խմբի համար ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գծով առանձին ակտիվ է ճանաչվում:

Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գծով ակտիվը ապաճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից, երբ ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը ներառվում են ապահովագրության պայմանագրերի համապատասխան խմբի սկզբնական չափման մեջ:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին Ընկերությունը վերանայում է ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գումարները, որոնք բաշխված են դեռևս չճանաչված ապահովագրության պայմանագրերի խմբերի միջև, որպեսզի արտացոլի կիրառված տեղաբաշխման մեթոդի հետ կապված ենթադրությունների փոփոխությունները:

Ցանկացած վերաբաշխումից հետո Ընկերությունը գնահատում է ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գծով ակտիվի փոխհատուցելիությունը, արդյոք փաստերն ու հանգամանքները ցույց են տալիս, որ ակտիվը կարող է արժեզրկվել: Փոխհատուցելիությունը գնահատելիս Ընկերությունը կիրառում է.

- արժեզրկման ստուգում գոյություն ունեցող կամ ապագա խմբի ապահովագրության պայմանագրերի մակարդակով, և
- արժեզրկման լրացուցիչ ստուգում, որը հատկապես վերաբերում է ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերին, որոնք բաշխված են ըստ ակնկալվող ապագա պայմանագրերի վերակնքումների:

Եթե արժեզրկումից կորուստ է ճանաչվում, ակտիվի հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, և արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ընկերությունը շահույթում կամ վնասում ճանաչում է նախկինում ճանաչված արժեզրկումից կորստի մի մասի կամ ամբողջի հակադարձումը և ավելացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքը այն դեպքում, եթե արժեզրկման պատճառ հանդիսացող պայմաններն այլևս գոյություն չունեն կամ բարելավվել են:

4.4.8. Վերափոխում և ապաճանաչում

Ընկերությունը ապաճանաչում է ապահովագրության պայմանագիրը, երբ՝

• պայմանագրին վերաբերող իրավունքներն ու պարտականությունները մարվել են (այսինքն՝ կատարվել է կամ չեղարկվել, ժամկետը լրացել է), կամ

• պայմանագիրը վերափոխվում է այնպես, որ վերափոխումը հանգեցնում է չափման մոդելի կամ պայմանագրի բաղադրիչի չափման կիրառելի ստանդարտի փոփոխության, էապես փոխում է պայմանագրային շրջանակը կամ պահանջում է վերափոխված պայմանագիրը ներառել այլ խմբում: Նման դեպքերում Ընկերությունն ապաճանաչում է սկզբնական պայմանագիրը և վերափոխված պայմանագիրը ճանաչում է որպես նոր պայմանագիր:

Եթե վերափոխումը չի դիտարկվում որպես ապաճանաչում, Ընկերությունը ճանաչում է պայմանագրի վերափոխման համար վճարված կամ վերափոխումից ստացված գումարները՝ որպես մնացորդային ծածկույթի համապատասխան պարտավորության ճշգրտում:

4.4.9. Ներկայացում

Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում առանձին ներկայացնում է հետևյալ խմբերի հաշվեկշռային արժեքները՝ թողարկված ապահովագրության պայմանագրեր, որոնք ակտիվներ են, թողարկված ապահովագրության պայմանագրեր, որոնք պարտավորություններ են, պահվող վերաապահովագրության պայմանագրեր, որոնք ակտիվներ են, պահվող վերաապահովագրության պայմանագրեր, որոնք պարտավորություններ են:

Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գծով ակտիվները, որոնք ճանաչվել են մինչև համապատասխան ապահովագրական պայմանագրերը ներառվել են ապահովագրության պայմանագրերի համապատասխան խմբերի հաշվեկշռային արժեքում, բաշխվում են ապահովագրության պայմանագրերի պորտֆելների հաշվեկշռային արժեքին, որոնց դրանք վերաբերում են:

Ընկերությունը շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչված ապահովագրության գործունեությունից ընդհանուր գումարը բաժանում է ապահովագրական ծառայությունների արդյունքի՝ բաղկացած ապահովագրական հասույթից ու ապահովագրական ծառայությունների գծով ծախսերից, և ապահովագրության գծով ֆինանսական եկամուտների կամ ծախսերի միջև:

Ընկերությունը չի բաժանում ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտման փոփոխությունը ֆինանսական և ոչ ֆինանսական մասերի միջև և դիտարկում է ողջ փոփոխությունը որպես ապահովագրական ծառայությունների արդյունքի մաս:

Ընկերությունը պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով եկամուտներն ու ծախսերը թողարկված ապահովագրության պայմանագրերի գծով եկամուտներից կամ ծախսերից առանձին է ներկայացնում:

4.4.10. Ապահովագրական հասույթ

Ժամանակաշրջանի ապահովագրական հասույթը տվյալ ժամանակաշրջանին վերագրված ապահովագրական վճարների ակնկալվող մուտքերն են: Ընկերությունը ապահովագրական վճարների ակնկալվող մուտքերը բաշխում է ծածկույթի յուրաքանչյուր ժամանակաշրջանի վրա ժամանակի անցմանը համամասնորեն, սակայն, եթե ծածկույթի ժամանակահատվածի ընթացքում ռիսկից ազատման ակնկալվող սխեման նշանակալիորեն տարբերվում է ժամանակի անցումն արտացոլող սխեմայից, ապա բաշխումը կատարվում է ապահովագրական ծառայությունների գծով ծախսերը կրելու ակնկալվող ժամկետի հիման վրա:

Ընկերությունն անհրաժեշտության դեպքում փոփոխում է բաշխման հիմունքը վերը նշված մեթոդների միջև, եթե փաստերն ու հանգամանքները փոխվում են: Փոփոխությունը հաշվառվում է առաջընթաց՝ որպես հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխություն:

Ներկայացված ժամանակաշրջանների համար ամբողջ հասույթը ճանաչվել է ժամանակի անցմանը համամասնորեն:

4.4.11. Ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր

Ապահովագրական ծառայությունների գծով ծախսերը, որոնք առաջանում են ապահովագրության պայմանագրերից, ճանաչվում են շահույթում կամ վնասում հիմնականում, երբ դրանք տեղի են ունենում: Դրանք ներառում են հետևյալ հոդվածները.

- Կրած պահանջներ և այլ ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր,
- Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա. Ընկերությունը ամորտիզացնում է ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը գծային հիմունքով՝ պայմանագրերի խմբի ծածկույթի ժամանակահատվածում,
- Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասներ և այդպիսի վնասների հակադարձում,
- Կրած պահանջների գծով պարտավորությունների ճշգրտումներ, որոնք չեն բխում փողի ժամանակային արժեքի, ֆինանսական ռիսկի և դրանց փոփոխություններից,
- Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գծով ակտիվների արժեզրկումից կորուստ և այդպիսի արժեզրկումից կորստի հակադարձում:

4.4.12. Պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով ծախսեր

Պահվող վերաապահովագրության պայմանագրերի գծով զուտ ծախսերը կազմում են վերաապահովագրողներին բաշխված ապահովագրավճարներ հանած վերաապահովագրողների կողմից փոխհատուցված գումարները: Ընկերությունը ճանաչում է վերաապահովագրողներին բաշխված ապահովագրավճարները շահույթում կամ վնասում, երբ վերաապահովագրության պայմանագրերի խմբերի շրջանակում ծառայություններ է ստանում:

Յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար վերաապահովագրողներին բաշխված ապահովագրավճարները տվյալ ժամանակաշրջանում ծառայությունների ստացման համար ակնկալվող ապահովագրավճարների գումարներն են:

Վերաապահովագրության պայմանագրերի խմբի համար, որոնք վերաբերում են հիմքում ընկած անբարենպաստ պայմանագրերին, Ընկերությունը սահմանում է մնացորդային ծածկույթի գծով ակտիվի վնասի փոխհատուցման բաղադրիչ, որպեսզի ներկայացնի ճանաչված վնասների վերականգնումը:

4.4.13. Վնասի բաղադրիչներ

Ընկերությունը ենթադրում է, որ ոչ մի պայմանագիր սկզբնական ճանաչման ժամանակ անբարենպաստ չէ, եթե փաստերն ու հանգամանքները այլ բան չեն ցույց տալիս: Եթե դա այդպես չէ, և եթե ծածկույթի ժամանակահատվածի ընթացքում նշված փաստերն ու հանգամանքները ցույց են տալիս, որ ապահովագրական պայմանագրերի խումբը անբարենպաստ է, Ընկերությունը սահմանում է վնասի բաղադրիչ՝ երբ խմբի մնացորդային ծածկույթի կատարման գծով դրամական հոսքերը գերազանցում են խմբի մնացորդային ծածկույթի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը: Ըստ այդմ, մինչև պայմանագրերի խմբի ծածկույթի ժամանակահատվածի ավարտը վնասի բաղադրիչը կզրոյանա:

4.4.14. Վնասի փոխհատուցման բաղադրիչներ

Երբ Ընկերությունը ճանաչում է վնաս՝ հիմքում ընկած ապահովագրության պայմանագրերի անբարենպաստ խմբի սկզբնական ճանաչման ժամանակ, կամ երբ խմբին ավելացվում են լրացուցիչ անբարենպաստ ապահովագրության պայմանագրեր, Ընկերությունը պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի համար սահմանում է մնացորդային ծածկույթի գծով ակտիվի մասով վնասի փոխհատուցման բաղադրիչ, որն արտացոլում է վնասների ակնկալվող փոխհատուցումը:

Վնասների փոխհատուցման բաղադրիչը հետագայում նվազեցվում է մինչև զրոյի՝ հիմքում ընկած ապահովագրության պայմանագրերի անբարենպաստ խմբի նվազեցումներին համապատասխան, որպեսզի արտացոլվի, որ վնասի փոխհատուցման բաղադրիչը չպետք է գերազանցի հիմքում ընկած ապահովագրության պայմանագրերի անբարենպաստ խմբի վնասի բաղադրիչի հաշվեկշռային արժեքի այն մասը, որն Ընկերությունն ակնկալում է վերականգնել պահվող վերաապահովագրության պայմանագրերի խմբի հաշվին:

4.4.15. Ապահովագրության գծով ֆինանսական եկամուտներ կամ ծախսեր

Ապահովագրության գծով ֆինանսական եկամուտները կամ ծախսերը պայմանավորված են ապահովագրության պայմանագրերի խմբի հաշվեկշռային արժեքի փոփոխությունով, որն առաջանում է՝

• փողի ժամանակային արժեքի և փողի ժամանակային արժեքի փոփոխության ազդեցությունից, և

• ֆինանսական ռիսկի ու ֆինանսական ռիսկի փոփոխության ազդեցությունից:

Ընկերությունը չի տարանջատում ֆինանսական եկամուտներն ու ծախսերը շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջև, այլ ամբողջությամբ ներկայացնում է շահույթ կամ վնասում:

4.5. Ներդրումային եկամուտների և ծախսերի ճանաչում

Ներդրումային եկամուտներն ու ծախսերը չեն առնչվում ապահովագրական պայմանագրերին և ներառում են իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միոցով չափվող պարտքային ներդրումներից տոկոսային եկամուտը, ամորտիզացված արժեքով չափվող ներդրումներից տոկոսային եկամուտը, ներդրումային արժեթղթերի ապաճանաչումից զուտ օգուտ (վնաս), վարձակալության գծով պարտավորության տոկոսային ծախսերը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

• ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ

• ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Ընկերությունը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու ակնկալվող պարտքային կորուստը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝

հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված ակնկալվող պարտքային կորուստի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան ակնկալվող պարտքային կորստի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Տոկոսային եկամտի և ծախսերի հաշվարկում արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվը արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Ներդրումների վաճառքից օգուտ (վնաս)

Ներդրումների վաճառքից օգուտը կամ վնասը հաշվառվում է որպես զուտ վաճառքի և իրական կամ ամորտիզացված արժեքի տարբերություն և ճանաչվում է վաճառքի գործառնության պահին:

4.6. Շահութահարկ

Շահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները: Այն դեպքում, երբ ֆինանսական հաշվետվություններն արտոնված են ներկայացման համար մինչ համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացնելը, ապա հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է մոտավոր թվերի վրա: Հարկային մարմինները կարող են ունենալ ավելի խիստ մոտեցում հարկային օրենսդրությունը մեկնաբանելիս և հարկային հաշվարկները ստուգելիս: Որպես արդյունք, հարկային մարմինները կարող են պահանջել լրացուցիչ հարկերի մուծում այն գործարքների գծով, որոնց համար նախկինում պահանջ չի ներկայացվել: Հետևաբար, կարող են առաջանալ նշանակալի լրացուցիչ հարկեր, տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումը կարող է ներառել ստուգման տարվան անմիջապես նախորդող 3 օրացուցային տարիներ: Որոշ հանգամանքներում հարկային ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակաշրջաններ:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուդվիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում չհանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը

առաջացման պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դուստր, ասոցիացված կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարբերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում ապահովագրական ընկերություններն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության «Այլ ծախսեր» հոդվածում:

4.7. Ֆինանսական գործիքներ

ա) Ճանաչում և սկզբնական չափում

Ֆինանսական գործիքների դասակարգումը սկզբնական ճանաչման պահին կախված է դրանց պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից:

Ֆինանսական գործիքներն սկզբնապես ճանաչվում են գործարքի ամսաթվին և չափվում են իրական արժեքով: Գործարքի գծով ծախսերը ավելացվում են տվյալ գումարին, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների:

բ) Դասակարգում

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը ունի երեք հիմնական դասակարգում՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող (FVOCI) և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (FVTPL):

Պարտքային գործիքը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե միաժամանակ բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակը պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումն է, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմաններին և չի նախանշվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը և թե՛ ֆինանսական ակտիվի վաճառքը և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Առևտրային նպատակներով չպահվող բաժնային գործիքներում կատարվող ներդրումների սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն որոշել ներկայացնել իրական արժեքի հետագա փոփոխություններն այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում: Այս ընտրությունը կատարվում է առանձին յուրաքանչյուր ներդրման համար:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է ամորտիզացված արժեքով կամ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու պահանջներին, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվապահական հաշվառման անհամապատասխանությունը, որը կառաջանար այլ պարագայում:

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը իր բիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որը լավագույնս արտացոլում է գործունեության նպատակների իրագործման համար ֆինանսական ակտիվների խմբերի կառավարման ուղղությամբ որդեգրած մեթոդները:

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը ու նպատակները և այդ քաղաքականության գործնական կիրառությունը: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունը ուղղված է պայմանագրով նախատեսված տոկոսային եկամուտ ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով,
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը ներկայացվում Ընկերության ղեկավարությանը.
- բիզնես մոդելի և դրա շրջանակում պահվող ֆինանսական ակտիվների արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը,
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ պայմանագրային հավաքագրված դրամական միջոցների հոսքերից,
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և հետագա վաճառքների վերաբերյալ ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների գծով գործունեության մասին տեղեկատվությունը դիտարկվում է ոչ թե առանձին հիմունքով, այլ որպես ընդհանուր գնահատման մաս, թե ինչպես է Ընկերությունը հասնում ֆինանսական ակտիվները կառավարելու համար սահմանված նպատակին և ինչպես են դրամական հոսքերը ձևավորվում:

Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամիտ ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատագույն» կամ «սթրեսային» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական միջոցների հոսքերը տեղի են ունենում Ընկերության սկզբնական ակնկալիքներից տարբեր կերպով, Ընկերությունը չի փոխում տվյալ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հետագայի համար հաշվի է առնում այդ տեղեկատվությունը նոր առաջացող կամ նոր ձեռք բերվող ֆինանսական ակտիվները գնահատելիս:

Պայմանագրային դրամական հոսքերի բնութագրի գնահատում – միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսի վճարումներ (SPPI test)

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ, Ընկերությունը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք դրանք բավարարում են SPPI գնահատման պահանջներին:

Այս գնահատման նպատակով, մայր գումար հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման ժամանակ և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի կյանքի ընթացքում (օրինակ՝ եթե կան մայր գումարի մարումներ կամ վարձատրության/զեղչի ամորտիզացիա):

Պարտքային գործիքի դեպքում սովորաբար տոկոսի ամենակարևոր տարրերն են՝ փողի ժամանակային արժեքը և պարտքային ռիսկը: SPPI գնահատումը իրականացնելու համար Ընկերությունը կիրառում է դատողություն և հաշվի է առնում համապատասխան գործոններ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվի արժույթը և տոկոսադրույքի գործողության ժամանակահատվածը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական պարտավորությունները որպես ամորտիզացված արժեքով չափվող:

գ) Հետագա չափում

Սկզբնական չափումից հետո պարտքային գործիքները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկման պահուստը: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ցանկացած զեղչ կամ հավելավճար և վճար կամ ծախսեր, որոնք արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի անբաժանելի մասն են: Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում, երբ ներդրումներն արժեզրկվում են:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքները հետագայում չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտները և վնասները ճանաչելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն կերպ, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների համար ակնկալվող պարտքային կորուստները չեն նվազեցնում այդ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում շարունակվում են ներկայացվել իրական արժեքով: Փոխարենը, այն պահուստի չափով գումարը, որը կառաջանար, եթե ակտիվները չափվեին ամորտիզացված արժեքով, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ որպես կուտակված արժեզրկման գումար, շահույթում կամ վնասում համապատասխան ծախսագրմամբ: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված վնասը ակտիվի ապաճանաչումից հետո տեղափոխվում է շահույթի և վնասի կազմ:

դ) Վերադասակարգում

Ընկերությունը չի վերադասակարգում իր Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն բացառիկ հանգամանքների, որոնց դեպքում Ընկերությունը ձեռք է բերում, օտարում կամ դադարեցնում է գործունեության տվյալ ուղղությունը:

ե) Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ այդ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ երբ փոխանցում է պայմանագրային դրամական հոսքերի ստանալու իրավունքը այնպիսի գործարքով, որով ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները փոխանցվում են կամ երբ չեն փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները, և դա չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ հսկողությունը:

Ընկերությունը համարում է, որ հսկողությունը փոխանցվում է միայն և միայն այն դեպքում, երբ ստացողը գործնական հնարավորություն ունի վաճառելու ակտիվն ամբողջությամբ չկապակցված երրորդ կողմին և ի վիճակի է միակողմանիորեն և առանց փոխանցման լրացուցիչ սահմանափակումներ կիրառելու:

Այն դեպքում, երբ Ընկերությունը ո՛չ փոխանցել և ո՛չ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը, ակտիվը ճանաչվում է այնքանով, որքանով Ընկերությունը շարունակում է մասնակցություն ունենալ տվյալ ակտիվում, որի դեպքում Ընկերությունը ճանաչում է նաև հարակից պարտավորություն: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և փոխհատուցման առավելագույն գումար, որը կարող է պահանջվել Ընկերությունից:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը երբ, նրա պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում կամ չեղյալ են համարվում, կամ ժամկետը լրանում է:

զ) Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների փոփոխում

Ֆինանսական ակտիվներ

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոփոխվում են, Ընկերությունը գնահատում է՝ արդյոք փոփոխված ակտիվի դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում: Եթե դրամական միջոցների հոսքերը էականորեն են տարբերվում, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է , իսկ նոր ֆինանսական ակտիվը ճանաչվում է իրական արժեքով՝ գումարած պայմաններին համապատասխանող գործարքի գծով ծախսումները:

Եթե փոփոխված ակտիվի ամորտիզացված արժեքով դրամական հոսքերը էականորեն չեն տարբերվում, ապա փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման: Այս դեպքում Ընկերությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտման արդյունքում առաջացած գումարը ճանաչում է որպես փոփոխությունից օգուտ կամ վնաս շահույթում կամ վնասում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ վերջինիս պայմանները փոփոխվել են և փոփոխված պարտավորության դրամական միջոցների հոսքերը էականորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

է) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում հաշվանցվում են և ներկայացվում են զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն ներկայացնելու այն զտման սկզբունքով կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՄ-ների, կամ մի խումբ համանման գործարքներից բխող օգուտի և վնասի դեպքում:

ը) Արժեզրկում

Ընկերությունը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների («ԱՊԿ») գծով պահուստը բոլոր պարտքային գործիքների համար, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: ԱՊԿ-ները հիմնված են պայմանագրային դրամական հոսքերի, որոնք վճարվում են պայմանագրի համաձայն և այն բոլոր դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք Ընկերությունը ակնկալում է ստանալ՝ զեղչված համապատասխան արդյունավետ տոկոսադրույքով:

Ընկերությունը չափում է կորուստների գծով պահուստները ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարի չափով, բացառությամբ ստորև նշված գործիքների, որոնց համար Ընկերությունը պետք է հաշվարկի ֆինանսական գործիքի ակնկալվող պարտքային կորուստների պահուստը այն գումարի չափով, որը հավասար է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին.

- հաշվետու ամսաթվի դրությամբ դեֆոլտի ցածր ռիսկով պարտքային ներդրումային արժեթղթեր,
- այլ ֆինանսական գործիքներ, որոնց գծով պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո էականորեն չի աճել:

Ընկերության պարտքային գործիքները ներառում են պետական պարտատոմսեր, որոնք համարվում են ցածր պարտքային ռիսկ ունեցող ներդրումներ: Ընկերության քաղաքականությունն է չափել նման գործիքները 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստների (12-ամսյա ԱՊԿ) հիմունքներով: Որևէ պարտատոմսի պարտքային ռիսկի վատթարացման դեպքում Ընկերությունը կվաճառի պարտատոմսերը և կգնի պարտատոմսեր, որոնք համապատասխանում են պահանջվող ներդրումային վարկանիշին:

Ընկերությունը ֆինանսական ակտիվը համարում է պարտազանցված (պատքային առումով արժեզրկված), երբ պայմանագրային վճարումները ժամկետանց են 90 օր: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում Ընկերությունը կարող է նաև ֆինանսական ակտիվը համարել պարտազանցված, երբ ներքին կամ արտաքին տեղեկատվությունը ցույց է տալիս, որ Ընկերությունը դժվար թե ստանա պայմանագրային չմարված գումարները: Ֆինանսական ակտիվը դուրս է գրվում, երբ պայմանագրային դրամական հոսքերը վերականգնելու ողջամիտ ակնկալիք չկա:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստների մի մասն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից:

Ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ակնկալվող պարտքային կորուստներ են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Ակնկալվող պարտքային կորուստների չափում

Ակնկալվող պարտքային կորուստները պարտազանցում տեղի ունենալու հավանականության, պարտազանցման պահին պարտքի գումարի, պարտազանցման դեպքում կորստի գումարի զեղչված արդյունք են, որոնք սահմանվում են հետևյալ կերպ.

Պարտազանցում տեղի ունենալու հավանականություն (PD): Այն որոշակի ժամանակահատվածի ընթացքում պարտազանցման հավանական լինելու գնահատումն է: Պարտազանցումը կարող է տեղի ունենալ միայն որոշակի պահի գնահատված ժամանակահատվածում, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

Պարտքի գումարը պարտազանցման պահին (EAD): Այն ապագա պարտազանցման ամսաթվի դրությամբ պարտքի գնահատված գումարն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո պարքտի գումարի ակնկալվող փոփոխությունները, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները պայմանագրով նախատեսված կարգով կամ այլ կերպ, փոխառություն ստանալու իրավունքի օգտագործումը և բաց թողնված վճարումների գծով հաշվեգրված տոկոսները:

Կորուստը պարտազանցման դեպքում (LGD): Այն արտահայտում է կորստի գնահատված գումարը, որը կառաջանա, եթե որոշակի պահի տեղի ունենա պարտազանցում: Այն հիմնված է վճարման ենթակա պայմանագրային դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի տարբերության վրա, որոնք Ընկերությունն ակնկալում է ստանալ: Այն սովորաբար արտահայտվում է որպես պարտազանցման պահին պարտքի գումարի տոկոս:

Ընկերությունը դասակարգում է իր ֆինանսական գործիքները փուլ 1, փուլ 2, փուլ 3, ինչպես նկարագրված է ստորև.

• Փուլ 1 – 12-ամսյա ԱՊԿ-ը գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՊԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ընկերությունը հաշվարկում է 12-ամսյա ԱՊԿ-ի պահուստը՝ հիմնվելով հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում պատազանցում տեղի ունենալու ակնկալիքի վրա: Այս ակնկալվող 12-ամսյա պարտազանցման հավանականությունները կիրառվում են կանխատեսվող EAD-ի նկատմամբ և բազմապատկվում ակնկալվող LGD-ով և զեղչվում համապատասխան արդյունավետ տոկոսադրույքով: Փուլ 1-ում դասակարգված ֆինանսական ակտիվները նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և ակտիվը վերադասակարգվել է փուլ 2-ից:

• Փուլ 2 – երբ ֆինանսական ակտիվը ստեղծման պահից ունեցել է պարտքային ռիսկի էական աճ, Ընկերությունը ձևավորում է գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Մեխանիզմները նման են վերը նկարագրվածներին, սակայն PD-ները և LGD-ները գնահատվում են գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում: Ակնկալվող կորուստները զեղչվում են համապատասխան արդյունավետ տոկոսադրույքով: Փուլ 2-ում դասակարգված ֆինանսական ակտիվները նաև ներառում են մնացորդներ, որոնցում պարտքային ռիսկը բարելավվել է և ակտիվը վերադասակարգվել է փուլ 3-ից:

• Փուլ 3 – պարտքային առումով արժեզրկված պարտքային գործիքների մասով Ընկերությունը ձևավորում է ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների պահուստ: Մեթոդը նման է ակտիվի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների մեթոդին, որի PD-ն սահմանվել է 100%:

Ապագայամետ տեղեկատվություն

ԱՊԿ մոդելներում Ընկերությունը հիմնվում է ապագայամետ տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես այնպիսի տնտեսական ելակետային տվյալների, ինչպիսիք են՝

• ՀՆԱ-ի աճ,

• Կենտրոնական բանկի բազային դրույքաչափեր

թ) Դուրսգրում

Ֆինանսական ակտիվները մասամբ կամ ամբողջությամբ դուրս են գրվում միայն այն ժամանակ, երբ Ընկերությունը դադարեցրել է վերականգնումը: Եթե դուրս գրվող գումարը գերազանցում է կուտակված կորուստների պահուստը, տարբերությունը նախ ավելացվում է պահուստին, որը այնուհետև կիրառվում է համախառն հաշվեկշռային արժեքի հանդեպ: Բոլոր հետագա վերականգնումները կրեդիտագրվում են պարտքային կորուստներից ծախսերի հետ:

4.7.1. Դրամական միջոցներ

Դրամական միջոցները ներառում են հաշիվները բանկերում: Դրամական միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

4.7.2. Ավանդներ բանկերում

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունն օգտագործում է բանկերում բացված ավանդային հաշիվներ: Ֆիքսված 90 օր և ավել մարման ժամկետով բանկերում ավանդները հետագայում հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Բանկերում ավանդները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7.3. Տրամադրված փոխառություններ

Փոխառությունները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Ընկերության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Երբ տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ երբ վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույքով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույքներով ակտիվների տեղաբաշխումից՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Այնուհետև փոխառությունների հաշվեկշռային արժեքը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆիքսված մարման ժամկետ չունեցող փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Փոխառությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7.4. Ներդրումային արժեթղթեր

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արժեթղթերում ներդրումները ներառում են,

• պարտքային ներդրումային արժեթղթեր, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով. Դրանք սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած ուղղակի գործարքների ծախսերը, իսկ հետագայում՝ դրանց ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

• իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթեր և

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյյունքի միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով օգուտը և վնասը ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյյունքում, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի, երբ ճանաչվում են շահույթում կամ վնասում, նույն ձևով, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դեպքում.

• տոկոսային եկամուտ՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ,

• ակնկալվող պարտքային կորուստներ և հակադարձում

• արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Երբ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային արժեթուղթը ապաճանաչվում է, նախկինում այլ համապարփակ արդյունքում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը սեփական կապիտալից վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

4.7.5. Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործարքներ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը

շարունակվում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշիռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է հետգնման պայմանագրեր բանկերի հետ հոդվածում:

Արժեթղթերի վաճառքից առաջացած ծախսը իրենից ներկայացնում է տոկոսային ծախս, որը հաշվեգրվում են հետգնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

4.8. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Համակարգիչներ և կապի միջոցներ	5	20
Տրանսպորտային միջոցներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ	8-20	12.5-5

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Ընկերություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է այլ ծախսերում:

4.9. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից և արտոնագրերից:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում՝ 1-10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն յուրաքանչյուր տարի գնահատվում են արժեզրկման առումով՝ անհատապես

կամ առանձին դրամաստեղծ միավորի համար: Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները յուրաքանչյուր տարի հսկվում են հիմնավորելու համար նրանց հաշվառման շարունակականությունը նշված դասում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ: Համակարգչային ծրագրերի մշակման գծով ծախսերը (օրինակ դիզայն և նոր կամ նորացված ծրագրի թեսթավորում) ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվներ, երբ Ընկերությունը կարողանում է ցուցադրել ոչ նյութական ակտիվի ստեղծման տեխնիկական հնարավորությունն այնպես, որ այն հնարավոր լինի վաճառքի կամ օգտագործման, իր մտադրությունը ստեղծելու ոչ նյութական ակտիվ և այն օգտագործելու կամ վաճառելու, իր ունակությունը օգտագործելու կամ վաճառելու ոչ նյութական ակտիվը, այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվը ստեղծելու հնարավոր տնտեսական օգուտներ, աշխատանքներն ավարտելու բավարար միջոցների առկայություն և դրանց հստակ գնահատում: Ծրագրային ապահովման գծով այլ ծախսերը ճանաչվում են դրանց ծագման պահին:

4.10. Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից՝ հանած վաճառքի ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս գնահատված ապագա դրամական հոսքերը զեղչվում են մինչև իրենց ներկա արժեքը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին հատուկ ռիսկերը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե տեղի են ունեցել փոփոխություններ փոխհատուցվող գումարը որոշելիս օգտագործված գնահատականներում: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որքանով ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ (առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի), եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

4.11. Վարձակալություն

Ցանկացած նոր պայմանագրի դեպքում Ընկերությունը դիտարկում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն: Վարձակալությունը սահմանվում է որպես «պայմանագիր կամ պայմանագրի մի մաս, որը փոխհատուցման դիմաց փոխանցում է ակտիվի (հիմքում ընկած ակտիվ) օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածի համար»: Այս սահմանումը կիրառելու համար Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը բավարարում է հետևյալ երեք հիմնական գնահատականներին.

- պայմանագիրը պարունակում է որոշակիացված ակտիվ, որը կա՛մ հստակ սահմանված է պայմանագրում, կա՛մ սահմանվում է անուղղակի վկայության հիման վրա՝ որոշակիացվելով այն պահին, երբ ակտիվը դառնում է հասանելի Ընկերությանը,
- Ընկերությունն իրավունք ունի ստանալու որոշակիացված ակտիվի օգտագործումից, ըստ էության, բոլոր տնտեսական օգուտները օգտագործման ողջ ժամանակահատվածում՝ հաշվի առնելով նրա՝ պայմանագրի որոշակի շրջանակում իրավունքները,

• Ընկերությունն իրավունք ունի օգտագործման ժամանակահատվածի ընթացքում ուղղորդելու որոշակիացված ակտիվի օգտագործումը: Ընկերությունն իրավունք ունի ուղղորդել, թե «ինչպես և ինչ նպատակով» ակտիվն օգտագործել օգտագործման ժամանակաշրջանի ընթացքում:

Վարձակալության ճանաչում և չափում

Ընկերությունը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Ընկերության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը նվազեցվում է կատարված վճարումների և մեծացվում տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Ընկերությունը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

4.12. Ֆինանսական երաշխավորություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրով Ընկերությունից պահանջվում է կատարել սահմանված վճարումներ՝ փոխհատուցելու համար վնասը, որը կրում է այդ պայմանագրի տիրապետողը՝ որոշակի դեբիտորի կողմից պարտքային գործիքի պայմանների համաձայն վճարումը ժամանակին չկատարելու հետևանքով:

Ֆինանսական երաշխավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով: Հետագայում, այս գործիքները չափվում են ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորուստի գծով պահուստի գումարի և սկզբնապես ճանաչված գումարի և համապատասխան դեպքերում, ՖՀՄՍ 15-ի համաձայն ճանաչված կուտակված եկամտի տարբերության առավելագույն գումարով:

Ֆինանսական երաշխավորությունների գծով առաջացած պարտավորությունները ներառվում են պահուստներում:

4.13. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

4.14. Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորման դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Չբաշխված շահույթ (Կուտակված վնաս)

Չբաշխված շահույթը (կուտակված վնասը) ներառում է ընթացիկ և նախորդ տարիների չբաշխված շահույթը (կուտակված վնասը):

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի պահուստ

Այս պահուստը արտացոլում է Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունները:

4.15. Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների

վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական հաշվառման գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են, և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

4.15.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ապահովագրության պայմանագրերի ընդհանրացման մակարդակը

Ընկերությունը նույնականացնում է ապահովագրության պայմանագրերի պորտֆելներ և սահմանում է պայմանագրերի խումբ, որոնք սկզբնական ճանաչման պահին դասակարգվել են որպես անբարենպաստ և պայմանագրերի խումբ, որոնց սկզբնական ճանաչման պահին նշանակալի հավանականություն չկա, որ դրանք հետագայում կդառնան անբարենպաստ:

Ապահովագրության և վերաապահովագրության պայմանագրերի չափումը

Ընկերությունը կիրառում է ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը՝ ապահովագրության պայմանագրերի խմբի չափումը պարզեցնելու նպատակով: Կատարված պահանջների գծով պարտավորությունները չափելիս Ընկերությունը զեղչում է դրամական հոսքերը, որոնք, ակնկալվում է, որ տեղի կունենան դրանց առաջանալու օրվանից ավելի քան մեկ տարի հետո և ներառում է ոչ ֆինանսական ռիսկի հստակ ճշգրտում:

Ֆինանսական ակտիվների դասակարգում

Ընկերությունը գնահատում է այն բիզնես մոդելը, որի շրջանակում ակտիվները պահվում են, ինչպես նաև գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն ե:

Ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկմանը վերաբերող չափանիշների սահմանում

Ընկերությունը սահմանում է չափանիշներ որոշելու համար, արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր, որոշելու համար ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափման մեջ ապագայամետ տեղեկատվությունը ներառելու մեթոդաբանությունը և ակնկալվող պարտքային կորուստների չափման համար օգտագործվող մոդելների ընտրությունն և հաստատումը:

4.15.2. Ենթադրություններ և գնահատման անորոշություն

Կրած պահանջների գծով պարտավորություն

Չմարված պահանջների վերջնական արժեքը գնահատվում է՝ օգտագործելով մի շարք ստանդարտ ակտուարային պահանջների նախագծման մեթոդներ:

Այս գնահատումների հիմքում ընկած հիմնական ենթադրությունը կայանում է նրանում, որ Ընկերության անցյալ պահանջները կարող են օգտագործվել պահանջների հետագա զարգացումը և, հետևաբար նաև, պահանջների վերջնական արժեքը կանխատեսելու համար: Այս մեթոդները

